

ծինաբանական, կազմախօսական ու հորմոնային որոշ տարբերությունները երբեք պատճառներ չեն եւ չեն կրնար ըլլալ, որ ընկերային հասարակութեան մէջ եւս որոշ տարբերութիւններ յարուցանուին կամ մարդոց միջեւ խտրակա-
նութիւն դրուի:

8. Համաճարակ (Pandemia)

Համաճարակը, վարակիչ հիւանդութիւններու ընդհանուր տարածումն է, իսկ տեղական բնոյթ կրող, աւելի սահմանափակ համաճարակները կարելի է կոչել՝ տեղաճարակ (Epidemia) կամ տեղավարակ:

Պատմութեան ընթացքին տեղի ունեցած են բազմաթիւ համաճարակներ, որոնք մեծ աւերներ գործած են եւ որոնց պատճառով միլիոնաւոր մարդիկ մահացած են:

Յիշենք ծանր համաճարակներու քանի մը օրինակներ.-

- Միջնադարեան *ժանտախտի*⁽¹¹¹⁾ ծանր համաճարակը (1346 – 1353 թ.), որ կոչուած է «սեւ մահ» („Black death“): Այս համաճարակը խլեց այդ օրուան աշխարհի բնակչութեան մէկ-չորրորդը (մօտ. 125 միլիոն մարդ): Նաեւ Նոր Դարու *ժանտախտի* համաճարակը (1894 – 1912 թ.), որու պատճառով մահացան մօտ. 12 միլիոն մարդ:
- Միջնադարեան *ծաղկախտի*⁽¹¹²⁾ համաճարակը (1519 – 1520 թ.), որ միայն Մեքսիկոյի մէջ մօտ. 8 միլիոն մահ պատճառեց: Ծաղկախտի բազմաթիւ համաճարակներ տեղի ունեցան նաեւ Նոր Դարաշրջանին:
- Նոր Դարաշրջանին, տեղի ունեցան բազմաթիւ *գրիպի*⁽¹¹³⁾ համաճարակներ, որոնցմէ յիշենք՝ «Սպանական գրիպը» (1918 – 1920 թ.), որ մօտ. 50 միլիոն մահ պատճառեց, «Ռուսական գրիպը» (1889 – 1890 թ. եւ 1977 – 1978 թ.), որոնցմէ իւրաքանչիւրը մօտ. 1 միլիոն մահ պատճառեց:
- Ժամանակակից, այժմեական համաճարակ մըն է «*Ձեռքբերովի իմունային*

(111) **Ժանտախտ** (լատ.՝ pestis, անգլ.՝ Plague, գերմ.՝ Pest) սուր վարակիչ հիւանդութիւն մը, որու պատճառը *Yersinia pestis* ցուպիկները կամ մանրէներն (Bacteria) են: Կը դարմանուի հակաբիոտիկներով (Antibiotics):

(112) **Ծաղկախտ** (լատ.՝ variola, անգլ.՝ Smallpox, գերմ.՝ Pocken) վիրուսային սուր վարակիչ հիւանդութիւն, որու պատճառը ծաղիկի վիրուսն (*Variola virus*) է: Ծաղկախտի դէմ գոյութիւն ունի յատուկ պատուաստ (անգլ.՝ Vaccine, գերմ.՝ Impfung):

(113) **Գրիպ** (Influenza, Grippe) վիրուսային սուր վարակիչ հիւանդութիւն, որու պատճառը գրիպի վիրուսի (*Influenza virus*) բազմաթիւ տեսակներն են: Վարակումը տեղի կ'ունենայ օդակաթիլային (շնչառութեան, հագի, փռշտուքի, խօսելու...) եւ կենցաղային առարկաներու միջոցներով: Անշուշտ գոյութիւն ունի գրիպի վիրուսի դէմ պատուաստ (Vaccine), որ սակայն այնքան ազդեցիկ չէ, որովհետեւ անոնց տեսակները բազմաթիւ են եւ ատակ են իւրայատուկ փոփոխութիւններու (Mutation):